ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱԽՇԻԻ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

(Ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 65-ամյակի առթիվ)

Գիտության յուրաքանչյուր բնագավառում կան գործիչներ, ովքեր, ընտրելով իրենց մասնագիտությունը, գիտական գործունեության ողջ ընթացքում շարունակել են հավատարիմ մնալ իրենց կոչմանը, տասնամյակներ շարունակ նվիրումով աշխատել են միևնույն հաստատությունում, ծանրակշիռ ներդրում ունեցել տվյալ ոլորտի զարգացման գործում և դրանով իսկ խոշոր ծառայություն մատուցել գիտությանն ու հայրենիքին: Այդ առումով հաստատապես կարող ենք արձանագրել, որ այսօր այդպիսի ճանաչված գիտնականներից է ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 65 տարին բոլորած անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և նախագահության երկարամյա աշխատակից, ԳԱԱ նախագահության խորհրդական Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:



Հայրենիքում և սփյուռքում Վլադիմիր Բարխուդարյանը վաղուց ճանաչում է ձեռք բերել որպես նշանավոր պատմաբան, լրջախոհ գիտնական, գիտության փորձառու կազմակերպիչ, ազնիվ քաղաքացի, մեր ժողովրդի ու հանրապետության հոգսերին մշտապես ականջալուր հայ մարդ: Մեր հանրապետության քաղաքացիները քաջածանոթ են նրա գիտական աշխատություններին, Արցախյան շարժման ծանր օրերին՝ քաղաքացիական արիության վառ օրինակ հանդիսացող գործունեությանը, անկախ ժամանակի քաղաքական վայրիվերումներից՝ հատուկ մարդկային շիտակությանը, սեփական հավատամքին անդավաճան մնալու անսահման կարողությանը:

Խորհրդային տարիներին, երբ ժամանակի գաղափարական կապանքների պատճառով հայրենաբնակ գիտնականներն ոչ միշտ էին ի զորու մեր ազգային մի շարք թեմաների հետազոտությանը, Վլադիմիր Բարխուդարյանն իր գործադրած ջանքերի և ճկուն գործելակերպի շնորհիվ ճանապարհ էր հարթում հայրենական պատմության անաչառ ուսումնասիրության, ազգային գիտության զարգացման համար, հանգամանք, որը մասնավորապես դրսևորվեց հայ ժողովրդի պատմության ութհատորյակի ակադեմիական հրատարակության ժամանակ:

Ակադեմիկոս Վ. Բախուդարյանն անդուլ հետազոտական աշխատանքի շնոր-

հիվ հայ հասարակության դատին հանձնեց բազմաթիվ ծանրակշիռ հետազոտություններ հայ գաղթավայրերի, սփյուռքի, ազգային-սոցիալական շարժումների, միջնադարյան Հայաստանի և գիտաճանաչողական մեծ նշանակություն ունեցող այլ խնդիրների վերաբերյալ: Առանձնակի հիշատակության արժանի է նրա երկհատոր կոթողային աշխատանքը Նոր Նախիջևանի գաղութի մասին, որը յուրահատուկ նշանակություն ունեցավ հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության մեթոդաբանության մշակման հարցում (1964, 1967):

Վ. Բարխուդարյանի ուսումնասիրությունն ակնառու է դարձնում հայկական գաղութի նշանակալի տեղը հարավային Ռուսաստանի Նովոռոսիայի գրեթե անմարդաբնակ տափաստանները յուրացնելու, առևտրատնտեսական կապերը զարգացնելու գործում: Հեղինակը հանգամանորեն լուսաբանել է Նոր Նախիջևանի տեղն ու դերը հայ-ռուսական հասարակական-քաղաքական կյանքում, կրթության, գրականության ու արվեստի ոլորտներում: Նոր Նախիջևանի օրինակով նա խորությամբ բացահայտել է այն իրողությունը, որ օտար երկնակամարների տակ ծվարած հայկական համայնքների կենսունակությունը մեծապես պայմանավորված է եղել Մայր Հայրենիքի հետ ունեցած կապերով: Վերջինիս հետ տարբեր ձևերով կապերն ու շփումները արգասավորում էին հայ համայնքների ազգային կյանքը, ամրապնդում նրանց ազգային դիմանգիծն ու գոյատևումը:

Մեծարժեք է Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական գաղութների պատմության վերաբերյալ Վ. Բարխուդարյանի ստվարածավալ հետազոտությունը (2010): Հայ-ռուսական փոխհարաբերությունների աստիճանական ձևավորման ողջ գործընթացում առանձնացնելով և ընդգծելով Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղթավայրերի դերակատարման կարևոր նշանակությունը՝ Վ. Բարխուդարյանը մենագրական հետազոտության միջոցով ներկայացրել է հայկական գաղթավայրերի գործունեության ամբողջական պատմությունը՝ սկսելով դրանց ձևավորման փուլից և հայ-ռուսական հարաբերությունների զարգացման լայն ետնախորքի վրա, առ այդ ավելի լիակատար ընդգրկելով աղբյուրագիտական նյութն ու ապահովելով նրանց համակողմանի քննությունը:

Վ. Բարխուդարյանի բնութագրմամբ՝ հայոց գաղթաշխարհի ընդհանուր պատմության հիմնական առանձնահատկությունը երկու հայրենիք ունենալու գաղափարի մարմնավորումն է: Բոլոր գաղութների համար ընդհանուր է եղել այն, որ նրանք լծորդել են Մայր հայրենիքը իրենց ապաստան տված երկրի, նոր հայրենիքի հետ: Ազգային ինքնության պահպանման համար հետևողական պայքարի մեջ էլ դրսևորվել է հայ ժողովրդի կենսունակությունը, ինչը և պայմանավորել է հեռանկարում հայրենիքում պետականության վերականգնման գաղափարը:

Վ. Բարխուդարյանի հետաքրքրությունների մյուս բնագավառը եղել է երկու ժողովուրդների պատմական կապերի և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը:Այդ հիմնահարցին նա նվիրել է բազմաթիվ հոդվածներ և աշխատություններ, որոնց մեջ առանձնանում են Վ. Ոսկանյանի հեղինակցությամբ գրված«Հայ-ռուսական հարաբերությունները և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին»

(1978) և «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմություն» (2006) աշխատությունները, որոնց մեջ փաստական նյութի հիման վրա քննարկվել և արժևորվել են հայ-ռուսական հարաբերությունների բազմապիսի հարցեր:

Վ. Բարխուդարյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ ստեղծվեցին հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք ժողովածուներ. «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը 16–18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996): Հունգարահայերի պատմությանը նվիրված ժողովածուն ստեղծվեց Հունգարիայի ժողովրդական հանրապետության և Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում հունգար և հայ մասնագետների համատեղ ջանքերով: Հունգար պատմաբանները տեղի արխիվներից արժեքավոր նյութեր հայտնաբերեցին և դրեցին գիտական շրջանառության մեջ: Նրանց ուսումնասիրությունների շնորհիվ ավելի ընդլայնվեցին մեր իմացությունները երկրի ազատագրական պայքարում, պետական կառավարման ու մշակութային բնագավառներում հունգարահայերի նշանակալի դերի մասին: Այդ ժողովածուի համար Վ. Բարխուդարյանը պարգևատրվեց Հունգարիայի գիտությունների ակադեմիայի մեդալով:

Գիտական արդյունաշատ գործունեությանը զուգընթաց, երկար տարիներ զբաղեցնելով ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրենի, Հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի, փոխնախագահի, Հայագիտության և հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պատասխանատու պաշտոնները՝ նա անգնահատելի ավանդ ունեցավ մասնավորապես հայագիտության զարգացման գործում: Վ. Բարխուդարյանը հասարակական իր աշխույժ գործունեությունն է ծավալել Մայր աթոռ Ս. Էջմիածնի Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամի կարգավիճակում:

Վ. Բարխուդարյանը առանձնակի ջերմությամբ է մասնակցում հայոց հոգևոր ու գիտամշակութային կյանքին: Ակտիվ մասնակցություն է ունեցել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կայացմանը: Գլխավորելով Դպրատան գիտական խորհուրդը՝ նա լուրջ դերակատարում ունեցավ հանրապետության գիտակրթական հաստատությունների և հոգևորականության ուժերով գիտաժողովների կազմակերպման ու նյութերի հրատարակության գործում: Նրա խմբագրությամբ հրատարակվեց «Աստվածաշնչյան Հայաստան» գիտաժողովի նյութերի մեծարժեք հատորը (2005):

Անհնարին է շրջանցել ակադեմիկոս Վ. Բարխուդարյանի գործունեության մեջ այնպիսի մի կարևոր բնագավառ, որպիսին հանրապետության կրթական կյանքում նրա ունեցած մեծ ավանդն է: 1990-ական թվականներին նրա ղեկավարությամբ գիտնականներից ու մանկավարժներից բաղկացած մասնագետների խմբի շնորհակալ աշխատանքի արդյունքում ծնվեցին Հայոց պատմության դպրոցական նոր դասագրքերը, որոնցում վիճահարույց շատ խնդիրներ ստացան իրենց հայեցակարգային լուծումները: Տասնամյակներ շարունակ դասավանդելով Երևանի պետական հա-

մալսարանում՝ Վ. Բարխուդարյանը մեծ նպաստ բերեց երիտասարդությանը կրթելու, հայրենասիրական ոգով դաստիարակելու այնքան անհրաժեշտ գործին:

Վաստակաշատ հայագետին մաղթում ենք երկար տարիների կյանք, քաջառողջություն, արևշատություն, գիտամանկավարժական ու հասարակական հետագա բուռն գործունեություն, նոր պրպտումներ, անսպառ ու բեղուն գրիչ՝ ի փառս հայրենական գիտության զարգացման և հայրենիք-սփյուռք գիտակրթական կապերի հետագա ամրապնդման:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ